րէր խսկականն, զնոյն ասէր և Իպրահիմ քեահեայ. գը-
բեցին յԵրուսաղէմ զի առաքեսցեն զհրովարտակն, այլ
ընկալան պատասխանի՝ թէ յղեցաք զամենայնն 'ի Կոստան-
դինուպոլիս. իսկ զդաշնագիրն Օմարայ տարեալ Եղիազա-
րու 'ի քաղաք անդր, այլ ոչ դարձուցեալ զայն, կորու-
սեալ եւ կամ յափշտակեալ 'ի ձեռաց նորա։ Եւ եղեւ 'ի
սատկանալ խնդրոյն 'ի Կոստանդինուպոլիս, տեսեալ Հա-
յոց թէ առանց իսկական հրովարտակաց չէ կարելի առ-
նել ինչ, գրեցին դարձեալ յԵրուսաղէմ և հանին կրկին
սուրհանդակ, զի որքան Թուղրալի հրովարտակ դտանիցի
յԱթոռն՝ յղեսցեն անպատճառ, իսկ Թղթատարացն հա-
սեալ 'ի Կիրինտիրէ առ Կիպրոսիւ՝ եղեն ծովմոյն։ Իսկ
Թէոդորոս Պատրիարք տագնապէր եւ տառապէր յետին
աղքատութեան և 'ի ներքոյ տոկոսաւոր պարտուց. միայն
'ի շրջանի երից ամաց էառ 500 քսակս, և այն չէր ինչ
յագուրդ կեղեքիչ այլազգեաց։ Տագնապ գալստեան Կու-
սակալին. փոփոխութիւն քաղաքապետին։ Քանզի Յոյնք
և Լատինք միաբանեալ խնդրէին զնախկին քաղաքապետն
զԳասպր աղա՝ որ հակառակ էր Հայոց. համարձակութիւն
Յունաց, նոր հակառակութիւն Լատինաց վասն բաժնի
Հայոց 'ի Ս. Յարութեան, զի գրաւեցին նոքա զտեղի
սեանն առաջի մեծի դրան, անխոյթ լինելն ազգին վասն
գերեզմանի Ս. Աստուածածնի. Յոյնք առաւել վստահու-
թիւն առեալ 'ի թուլութենէ Հայոց՝ յաւելին անդ կան-
թեղս և զարդս, և այս ամենայն անընդմիջելի ցաւոց ոչ
կարելով տոկալ Թէոդորոսի՝ թախանձագին սրտիւ գրէր՝ թէ
չիք յոյս յայսմհետէ մնալոյ մեզ առա՝ զրկիմք 'ի ժառան-
գութենէ, և ինքն ջանահնար եղեւ փոխչիլ ծածկաբար
յԵրուսաղէմէ, այլ խնացեալ զայն միաբանաց՝ պահեցին
զճանապարհն և կալան զնա, և եդին ուխտ ընդ նմա՝ թէ
զկնի գնալոյ աստի Կուսակալին՝ արա զոր խորհիսդ, եւ
այնպէս հանդարտեցուցին զնա։ Եւ 'ի վերայ այսր՝ թա-
խանձանք Յակոբ Եպիսկոպոսի եւ Պօղոս վարդապետի,
միայն հրաժարիլ 'ի Փոխանորդութենէ, եւ երկրորդին՝
հեռանալ 'ի մայրաքաղաքէն (1806)։

Ազգայինք Կոստանդինուպոլսոյ միաստնդամ գրեցին
առ Թէոդորոս Պատրիարք խիստ բանիւք փութով առա-